

ՀՈՒՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՏՅ
(Մենդյան 70-ամյակի առթիվ)

ՊԼՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ Վ. Բ. ԲԱՐԵՆՈՒԴԱՐՅԱՆ

Լրացավ նշանավոր պատմաբան, արևելագետ-հայագետ, Բուդապեշտի-համալսարանի պրոֆեսոր է. Շյուտցի ծննդյան 70-ամյակը: Պատմաբանասիրական լայն ընդգրկում ունեցող, գիտական բազմաթիվ աշխատությունների հեղինակ էդմոնդ Շյուտցի անունը լայնորեն հայտնի է ինչպես Հունգարիայում, արտասահմանի այլևայլ երկրներում, այնպես էլ Սովետական Հայաստանում: Համընդհանուր այդ ճանաչմանը նա արժանացել է գիտությանը ամենացորդ իր նվիրումով, մեղմ, հմայիչ, համեստ ու մարդամոտ բնավորությամբ, երիտասարդ մասնագետների և առհասարակ շրջապատի նկատմամբ արտակարգ հոգատարությամբ:

Էդմոնդ (Օդոն) Շյուտցը ծնվել է 1916 թ. Բուդապեշտում, մտավորականի ընտանիքում: 1933 թ. տեղի գիմնազիան ավարտելուց հետո սովորում է Պետեր Պազմանի անվան համալսարանում, հատուկ կուրս անցնում Յոժեֆ Էտվոշի գիտական կադրեր պատրաստող ինստիտուտում և ստանում բանասեր-պատմաբանի լայն ու հիմնավոր կրթություն: Բարձրագույն կրթությամբ նրան տրվում է միջնադարի պատմության դիտական աշխատողի և հունգարա-գերմանական բանասիրության մանկավարժի որակավորում: Հենց համալսարանում էլ սկսում է իր հետազոտական աշխատանքները Հունգարիայի պատմության վաղ շրջանի և բանասիրության ուղղությամբ:

Պատերազմի տարիներին (1942—1945 թթ.) կանչվում է զինվորական ծառայության, որից հետո խմբագրական և թարգմանչական (ռուսերեն, ֆրանսերեն) աշխատանքներ է կատարում մամուլում և պետական հաստատություններում: 1951—1969 թթ. աշխատում է Հունգարիայի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, իսկ 1957 թ. գիտամանկավարժական աշխատանքի անցնում Բուդապեշտի համալսարանում:

Է. Շյուտցի վաստակը, մասնավորապես հայ ժողովրդի պատմության ու բանասիրության ասպարեզում նրա գործունեությունը արժեքավորելու համար անհրաժեշտ է թեկուզ և թուուցիկ հայացք ձգել Հունգարիայում հայագիտության զարգացման վրա: Հայագիտությունը Հունգարիայում շատ հին ավանդներ չունի. սկզբնավորվել է XX դարի սկզբներին և զարգացում ապրել մանավանդ ղարի երկրորդ կեսին: Մի քանի էական հանգամանք պայմանավորել են հետաքրքրությունը հայագիտության նկատմամբ:

Առաջինը հայկական բավական նշանակալից գաղթավայրերի գոյության փաստն է պատմական Հունգարիայի տարածքում: XVII—XVIII դդ. Տրանսիլվանիայում կային թագավորական հատուկ շնորհագրերից օգտվող, իրենց ինքնավարությունն ունեցող, տնտեսական, ինչպես և հասարակական լիաթողկյանքով ապրող հայկական գաղութներ: Հետագայում՝ XIX դարում, հայերը նշանակալից դեր էին կատարում երկրի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: 1887—1907 թթ. այնտեղ հրատարակվում էր հունգարա-

րահայերի պատմության ու մշակույթի մասին արժեքավոր նյութեր պարունակող «Արմենիա» հայագիտական ամսագիրը: Հունգարիայում ապաստան գտած և հունգար ժողովրդի հետ նրա պատմական ճակատագիրը կիսած հայերի անցյալի պատմությունն իմանալու պահանջը, բնականաբար, հետաքրքրություն էր առաջացնում առհասարակ հայերի և հայագիտության նկատմամբ:

Երկրորդ հանգամանքը կապվում է Հունգարիայի պատմության վաղ շրջանի հետ: Հայտնի է, որ հունգարները IX դարում Դանուբի ափերին հան-



գրվան գտնելուց և պետականություն հաստատելուց առաջ երկար ճանապարհ էին անցել: Նրանց նախնիները բնակվել են Հարավային Ռուսաստանի ու Հյուսիսային Կովկասի տարածքում, տարբեր ցեղերի ու ժողովուրդների հարևանությամբ: Դրանց մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել V—IX դդ. հայ պատմիչների երկերում: Այդ պատճառով էլ Հունգարիայի պատմության վաղ շրջանը հետադոտելու համար հայկական աղբյուրներին դիմելու, հետևաբար նաև հայագիտությամբ զբաղվելու անհրաժեշտություն է առաջանում: Եվ քանի որ հայագիտությունը նպաստում է Հունգարիայի ազգային

պատմության հետազոտմանը, այն դառնում է ուսումնասիրության կենսական ու անհրաժեշտ մի բնագավառ:

Վերջապես դոյություն ունի ընդհանուր բնույթի մեկ այլ հանգամանք ևս: Հայ ժողովրդի պատմությունն ընթացել է Արևելքի մերձավոր ու հեռավոր երկրների հետ առևտրական ու ռազմաքաղաքական շփումների պայմաններում: Հին ու միջնադարյան աղբյուրները արտացոլել են հայերի՝ ուրիշ ժողովուրդների հետ ունեցած այդ առնչություններն ու շփումները: Հետևաբար հայկական աղբյուրների, հայոց պատմության ուսումնասիրությունը մեծապես նպաստում է հատկապես Մերձավոր Արևելքի, Փոքր Ասիայի ու Կովկասի ժողովուրդների անցյալի, առհասարակ արևելյան քաղաքակրթության մասին գաղափար կազմելուն: Ուրեմն գիտության կարևոր այս ճյուղով՝ արևելագիտությամբ զբաղվելու անհրաժեշտությունը, բնականաբար, հետաքրքրություն է առաջացնում նաև հայագիտության նկատմամբ:

«Արմենիա» ամսագրի խմբագիր Խ. Սոնգոտյանի կատարած աշխատանքներից հետո, կարելի է ասել, փաստորեն 1906 թ. սկսած Լուկաս Պատրուբանյանի կողմից Բուդապեշտի համալսարանում տարիներ շարունակ հայոց լեզվի դասավանդումով սկզբնավորվում է հայագիտությունը Հունգարիայում: Պատրուբանյանի մահից հետո տեղափոխվելու ապրեցին թե՛ նրա ձեռնարկումը և թե՛ հայագիտության ուղղությամբ կատարվող աշխատանքներն առհասարակ:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հայագիտության նկատմամբ հետաքրքրություն արթնացրին նշանավոր պատմաբան-արևելագետ, ակադեմիկոս Լայոշ Լիգետին և պրոֆ. Կարոյ Ցեզելդին:

Հունգարիայում չկային հայագիտությամբ զբաղվելու անհրաժեշտ պայմաններ: Լ. Պատրուբանյանի՝ ժամանակին գոյություն ունեցող հայագիտական հարուստ գրադարանը ցրվել, այլևս գոյություն չունի:

Է. Շյուտցն ըստ ամենայնի ըմբռնում էր, որ առանց համապատասխան աղբյուրագիտական բազայի հնարավոր չէ Հունգարիայում լրջորեն հայագիտությամբ զբաղվել: Այդ պատճառով էլ 1950-ական թթ. սկսած գիտամանկա-

վարժական գործունեությանը զուգահեռ ձեռնամուխ եղավ հայագիտական-արևելագիտական գրականության ձեռք բերելու գործին: Կարճ ժամանակում նա ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանի, Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի և Մաշտոցի անվան Մատենադարանի աջակցությամբ հիմք դրեց հայագիտական գրադարանի: Հետագայում լայն կապեր հաստատելով Հայաստանի և արտասահմանի հայագիտական հաստատությունների ու կենտրոնների և առանձին մասնագետների հետ, նա անդադրում հետևողականությամբ հարստացրեց իր գրադարանը: Նա այնպիսի նվիրումով ու ջանասիրությամբ է կատարում գիտական աշխատանք ծավալելու համար կարևոր այդ գործը, որ լիովին իրազեկ է Հայաստանում նոր լույս տեսած կամ հրատարակության ընթացքում գտնվող աշխատություններին: Իվ լայն ընդգրկում ունեցող հայագետին բնութագրական է այն, որ անձնական գրադարանը հիմնադրել ու հարստացրել է ոչ միայն իր անմիջական հետաքրքրությունների ոլորտն ընդգրկող, այլև լայն առումով արևելագիտական ու հայագիտական գրականությամբ: Շնորհիվ դրա Հունգարիայում հայագիտության որևէ պրոբլեմով զբաղվող մասնագետը չի կարող աշխատանքներ ծավալել առանց կապվելու է. Շյուտցի հարուստ գրադարանի հետ:

Պատմա-արևմտահայկական հիմնավոր կրթությունը, բազմաթիվ լեզուների իմացությունը թույլ են տվել գիտնականին անդրադառնալու արևելագիտական-հայագիտական ռազմաթիվ ոլորտներին և դրանք քննարկել համակողմանի, պատմությամբ, լեզվագիտության ընթացքում հնարավորությունները և դրանց տվյալների համադրության միջոցով:

Է. Շյուտցն իր գիտական գործունեությունը սկսել է համալսարանում ստացած մասնագիտությամբ՝ ավթայական լեզուների և Միջին Ասիայի պատմության հարցերի հետազոտում: Այդ պրոբլեմը նա քննարկել է քոչվոր և տեղաբնիկ ժողովուրդների հարաբերությունների լայն հետնախորքի վրա: Նա անդրադառնում է Առաջավոր Ասիայից դեպի Պարսկաստան, Հայկական լեռնաշխարհ, Կովկաս և հարավ-արևելական տափաստանները քոչվոր ցեղերի ներխուժումներին: Քննում է մասնավորապես հարավային Ռուսաստանի ու Հյուսիսային Կովկասի տարածքի ժողովուրդների՝ հոների, ալանների, ավարների, խազարների վաղ շրջանի պատմության հարցերը: Հարկ է նշել, որ այդ ուղղությամբ նկատելի աշխատանք է կատարել Կ. Ցեզելդին: Հենվելով նաև հայկական աղբյուրների վրա, նա ցույց է տվել, թե V—IX դդ. ինչ ժողովուրդներ էին ապրում Հյուսիսային Կովկասում: Նրա հետազոտությունների արդյունքը եղան «Տափաստանների ժողովուրդների պատմությունը մինչև խազարները» և «Նազարների պատմությունը» աշխատանքները: Քանի որ հունգարներն իրենց այժմյան երկրում հաստատվելուց (896 թ.) առաջ հարավային Ռուսաստանում խազարների հպատակներն էին, ապա այդ պրոբլեմը առանցքային նշանակություն է ստանում հունգարների նախնական պատմության համար: Է. Շյուտցը մեծ չափով դիմում է V—IX դարի հայ պատմագիրներին, որոնք ուշագրավ տեղեկություններ են պահպանել բազմիցս Անդրկովկաս ու Հայաստան ներխուժած քոչվոր այդ ժողովուրդների մասին: Նա հայ պատմիչների վկայությունների հիման վրա 1955 թ. սկսած Հունգարիայի ԳԱ գիտական ամսագրերում մի շարք հետազոտություններ հրատարակելուց զատ ձեռնամուխ է լինում Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Նղիշի, Սեբեոսի, Ղևոնդի և Կաղանկատվացու երկերի ուսումնասիրությանը:

Է. Շյուտցը անդրադառնում է նաև պատմական հաջորդ դարաշրջանում՝ X—XIII դդ. քոչվոր և տեղաբնիկ ժողովուրդների հարաբերությունների պրոբլեմին: Պատմության այդ փուլում Միջին Ասիայից քոչվոր ցեղերի ու ժողովուրդների արշավանքները տեղի են ունենում երկու խոշոր ալիքով: Նախ խաշնարած սելջուկ-թուրքական ցեղերն են ներխուժում Անդրկովկաս ու Հայաստան և հաստատում իրենց տիրապետությունը: Դրա հետևանքով սկսվում է հայերի զանգվածային արտագաղթ դեպի Փոքր Ասիա, քուլանդական տիրապետության արևելյան պրովինցիաները, ուր դեռևս արաբական արշավանք-

ների ու տիրապետության շրջանում առաջացել էին հայկական գաղութներ: Հայկական այդ զանգվածներն էլ XI դարի վերջերին (1080 թ.) հիմնեցին Կիլիկիայի հայկական պետությունը: Մի թագավորություն, որը գոյատևեց երեք դար և տնտեսական, մշակութային մեծ զարգացում ապրեց ու կարևոր դեր կատարեց հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ:

Հաջորդ փուլում մոնղոլ-թաթարական արշավանքների հետևանքով սկսված գաղթագնացության ակիբը ուղղվում է արդեն դեպի հյուսիս-արևմուտք: Ե. Շյուտցը ցույց է տալիս, որ տակավին XI դարի վերջերին, մոնղոլական արշավանքներից առաջ հայերին ծանոթ է եղել հյուսիսային երկրամասը, իսկ Կիլիկիայի գոյություն է ունեցել քիչ թե շատ նշանակալից հայկական գաղութ: Նրա ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ Արևելյան Եվրոպայում հայկական գաղութները (Գալիցիա, Պոդոլյե, Մոլդավիա և այլն) մեծ մասամբ առաջացել են թաթար-մոնղոլական արշավանքներից հետո: «Հայ ժողովրդի XI—XIII դարերի ընթացքում կատարված հիմնական արտագաղթները,—եզրակացնում է հունգար հայագետը,—ինչպես նշեցինք, երկու մեծագույն, համազգային աղետների՝ XI դարում սելջուկների և XIII դարում մոնղոլ-թաթարների արշավանքների ուղղակի հետևանք են:

Պատմական աղբյուրների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սելջուկների արշավանքների հետևանքով հայ բնակչությունը գաղթել է դեպի հարավ, դեպի Բյուզանդական կայսրության հարավ-արևելյան նահանգները, դեպի հյուսիսային Ասորիք ու Կիլիկիա: Իսկ մոնղոլ-թաթարական արշավանքները հայերին տեղահան են արել մեծ մասամբ դեպի հյուսիս, ապա՝ դեպի հյուսիս-արևմուտք: Վերջին արտագաղթի հետևանքով հետզհետե կազմավորվել են ստվար բնակչություն ունեցող Ղրիմի, Գալիչ-Պոդոլյան ու Մոլդավիայի հայկական գաղթօջախները¹:

Ռուսական իշխանություններին իրենց ենթարկելուց հետո դեպի Եվրոպա աղղված մոնղոլների արշավանքներն առնչվում են ինչպես Հունգարիայի, այնպես էլ այնտեղ հաստատված հայկական գաղութի պատմության հետ:

Պրոֆ. Է. Շյուտցը երկար տարիներ մանրակրկիտ ուսումնասիրել է այդ ժամանակաշրջանի հունգարական տարեգրություններն ու այլ աղբյուրները՝ հայերի մասին հիշատակություններ գտնելու նպատակով, քանի որ արևելքից գաղթած ժողովուրդների բեկորների թվում հունգար պատմագիրները հիշատակում են նաև հայերին: Նրան հաջողվում է գտնել միայն կասկածելի մեկ անձնանուն՝ «Կատապան»: Բյուզանդական տիրապետության ներքո գտնվող Հայաստանում այդ պաշտոնը վարում էին Բագրատունի և Պահլավունի հայ գործիչները: Սակայն XIII դարի երկրորդ կեսի հունգարական փաստաթղթերում հիշատակվում են «հայերի բնակավայր», «հայերի ավան», որ անտարակույս վկայում է միջնադարյան Հունգարիայի մայրաքաղաք էստերգոմում հայերի բնակության մասին: Ավելին, Բելա IV թագավորը 1243 թ. հատուկ հրովարտակով հաստատում է իր նախորդների կողմից հայերին տրված առանձնաշնորհումները:

Է. Շյուտցը համոզիչ կովաններով ոչ միայն ապացուցել է էստերգոմում հայկական համայնքի գոյությունը, այլև հավանական է համարում, որ հայերը մասնակցել են Հունգարիայի մայրաքաղաքը մոնղոլ-թաթարական հորդանքներից պաշտպանելուն: Այդուհանդերձ նա գտնում է, որ մինչև մոնղոլական արշավանքները միայն աննշան թվով հայեր են եղել, նրանց մեծամասնությունը Հունգարիա է եկել մոնղոլական արշավանքների հետևանքով: Հունգար թագավորները գրկաբաց ընդունել են հայ և այլազգի մյուս եկվորներին, քանի որ նրանք կարող էին նպաստել թաթարների արշավանքներից վտանգված երկրի զինվորական ու տնտեսական կարողությանը: Հունգարական աղբյուրներում

¹ Է. Շյուտց. Հայերի արտագաղթների գլխավոր ուղղությունները միջին դարերում և էստերգոմի հայ գաղութը.—«Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմություն», Երևան, 1983, էջ 31:

հայերի հետադարձ գոյության մասին այլևս վկայություն պահպանված չլինելու հանդասանքից հեղինակը, իրավամբ, եզրակացնում է, որ էստերգոմի հայկական հաղութը երկարատև կյանք չի ունեցել:

Հունգար հայագետը վերոհիշյալ պրոբլեմը քննարկել է «Մոնղոլ-թաթարական արշավանքների հարցի շուրջը», «Դեպի Հունգարիա կատարված մոնղոլական 1241 թ. արշավանքի հարցը», «Թաթարական հարձակումները Անդերկովկաս», «Հայերենից հունգարերեն փոխառնված բառերը», «Կատապան անվան մասին» և բազմաթիվ այլ հոդվածներում:

Պրոֆ. է. Շուտցը հանգամանալից ուսումնասիրության նյութ է դարձրել նաև մոնղոլական արշավանքներին ու տիրապետությանը հաջորդող ժամանակաշրջանի՝ ուշ միջնադարի Արևելյան Եվրոպայի հայկական գաղթավայրերի պատմամշակութային հարցերը: Նրա այդ հետաքրքրությունները առավել հասկանալի են դառնում, երբ նկատի ենք առնում, որ արևելյան Ուկրաինայի ու Մոլդավիայի հայկական գաղութների հետ է առնչվում Տրանսիլվանիայի հայկական նշանավոր կենտրոնների ու գաղթավայրերի առաջացումը:

Նա անդրադառնում է Ղրիմի, Լվովի, Կամենեց-Պոդոլսկի և այլ բնակավայրերի հայերի պատմաէթնիկական ու լեզվամշակութային հարցերին: Դրանց են նվիրված «Լվովում հրատարակված հայ-ղփշաղերեն գրքի մասին», «XVI դ. Լվովի հայկական ամուսնական օժիտի պայմանագրերը և կտակները», «Խաչատուր Կաֆայեցու ժամանակագրությունը», «Թաթարները Ղրիմում», «Հայկական գաղութները Ղրիմում», «Հայերի Ղրիմում հաստատվելու փուլերը» և այլ աշխատանքներ:

Հունգար հայագետը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել ղփշաղերեն լեզվի հարցերին: Եվ դա պատահական չէ: Հայագիտության համար կարևոր նշանակություն ունի հայկական տառերով գրված օտարալեզու բնագրերի հարցը: Անցյալի պատմական իրողությունները բացահայտելու հանգամանքից բացի, հայատառ բնագրերը տալիս են օտար լեզուների այն ժամանակվա արտասանության ճշգրիտ պատկերը: Հայտնի է, որ Ղրիմի թերակղզում երկու հարյուր տարի ղփշաղների մեջ ու նրանց հետ կողք-կողքի ապրած և հետագայում դեպի արևմուտք գաղթած հայերը գիտեին նաև այդ լեզուն: Ավելին, նրանք հաճախ պաշտոնական գրագրությունները վարում էին ղփշաղերեն, սակայն հայերեն տառերով: է. Շուտցը հետազոտել, խորացել է ղփշաղերենի մեջ և մի շարք հոդվածներից դատ 1968 թ. Հունգարիայի ԳԱ հրատարակությամբ տպագրել է «Հայ-ղփշաղ մի տարեգրություն՝ 1620—1621 թթ. լեհ-թուրքական պատերազմի մասին» արժեքավոր աշխատությունը: Այդ ուսումնասիրությունը աշխույժ հետաքրքրություն առաջացրեց պատմաբանների, հատկապես հայագետների, սլավոնագետների և թուրքագետների շրջանում: «Հայ-ղփշաղ տարեգրությունը» կամ «Կամենեցի տարեգիրքը» կարելի է սկզբնաղբյուր է Արևմտյան Ուկրաինայի, Լեհաստանի և Մոլդավիայի XVI—XVII դդ. պատմության ուսումնասիրության համար: Հեղինակը «Տարեգրության» առավել հավաստիությունը հիմնավորում է լեհական և թուրքական համապատասխան աղբյուրների հետ այն բաղդատելով: Նա քննարկում է խոտինի անցքերը լեհական պատմական աղբյուրների, Կամենեցի տարեգրի և հայկական աղբյուրների ընդհանուր կապակցության մեջ: Աշխատությունը առանձնապես արժեքավորվում է նրանով, որ տրվում է «Կամենեցի տարեգրության» ղփշաղերեն մինչ այդ չվերծանված բնագրի նաև անգլերեն թարգմանությունը: Հայ-ղփշաղ տարեգրությունը, բացի ռազմաքաղաքական իրադարձություններից, հարուստ տեղեկություններ է պարունակում նաև տեղի հայության առևտրատնտեսական կյանքի վերաբերյալ:

Գիտնականը շնորհակալ գործ է կատարել նաև ղփշաղերենի քերականության ուսումնասիրության ուղղությամբ, մասնավորապես հնչյունաբանական և ձևաբանական հանդամանալից քննարկման նյութ դարձնելով հայ-ղփշաղ բնագրերը: Հայատառ ղփշաղերենի նկատմամբ լրջախոհ հետաքրքրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ղփշաղները (պոլովցիները)

XIII դարում թաթար-մոնղոլական արշավանքների ճնշման տակ գաղթել են արևմուտք և հաստատվել Հունգարիայում:

Պատմական Հունգարիայում ապաստան գտած հայերը գոյատևման բարենպաստ պայմաններ ունեին, պետության կողմից բավականաչափ լայն առանձնաշնորհումներ էին ստացել: Դրա շնորհիվ տնտեսական ու իրավաքաղաքական բարվոք դրույթյան մեջ էին: Հունգարահայերը ակտիվ մասնակցություն ունեցան երկրի, իրենց երկրորդ հայրենիքի ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին: Հայտնի է ուշ միջնադարում և հատկապես նոր շրջանում՝ 1848—1849 թթ. Հունգարիայի հեղափոխական-ազատագրական պայքարին հայերի գործունե մասնակցությունը:

Հայերը մասնակցել են նաև XVII դարում թուրքական լծից Հունգարիայի ազատագրմանը: Ե. Շյուտցը անդրադարձել է 1686 թ. Հունգարիայի մայրաքաղաք Բուդան ազատագրելու գործում Գ. Թոխատեցու ջանքերին, ուսումնասիրել նրա նամակները Վիեննայի պատերազմական խորհրդին, այդ դեպքերի մասնակից հայազգի գործչի օրագրությունները:

XVI—XVIII դդ., ինչպես հայտնի է, Հայաստանը գտնվում էր Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ: Սոցիալական ու ազգային հարստահարությունների հետևանքով բուն երկրում վերացել էին ոչ միայն խաղաղ, ստեղծագործական աշխատանքի հնարավորությունները, այլև վտանգված էր անգամ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Նման պայմաններում հայկական մշակույթը, հայ հասարակական-քաղաքական միտքը զարգանում էր դրսում, տարբեր երկրներում սփռված հայկական գաղթավայրերում:

Արևմտյան Նվրոպայի երկրներում XVII դարում առաջացան հայկական առանձին փոքր օջախներ, որոնք եվրոպական լուսավորական շարժման ազդեցության տակ հրատարակչական, առհասարակ կուլտուր-լուսավորական գործունեություն էին ծավալում: Այդ շարժումը, գործնական խնդիրներից զատ, իր հեռանկարում ժողովրդին լուսավորելու միջոցով ինքնագիտակցության բերելու և հայրենի երկրի ազատագրության գաղափարին ծառայեցնելու միտում ուներ: Է. Շյուտցի ուսումնասիրությունների շնորհիվ («Տպագրական տառերի նշանավոր հունգար փորագրողը և հայկական տպագրական արվեստը Ամստերդամում XVII դարում») հայտնի դարձավ, որ հռչակավոր հունգար տպագրիչ Միկլոշ Կիշին Տրանսիլվանիայի հայերը 1680 թ. ուղարկում են Ամստերդամ «Աստվածաշնչի» տպագրությանը հետևելու: Այնտեղ էլ նա (1685 թ.) հայկական տպարանի համար պատրաստում է տառեր, որոնք որոշ բարեփոխումներ կրելով, մինչև 1717 թ. օգտագործել են տեղի տպարանում: Հետագայում Մխիթար Աբբահայրը ձեռք է բերում վաճառքի հանված այդ տառերը, որոնցով հրատարակվում են Վենետիկի Մխիթարյանների աշխատությունները: Տառերը օգտագործվել են մինչև 1836 թ. և թեկուզ և վատ վիճակում այնտեղ պահվել մինչև XX դարի սկզբները:

Է. Շյուտցը զբաղվել է նաև լվովի XVII դարի առաջին կեսի տպարանի պատմության հարցերով: Նա ցույց է տվել («Լվովի տպարանի 1618 թ. հայ-ղփշաղներին տպագիր հուշարձանը»), որ 1616 թ. լվովում հիմնադրված տպարանում հայկական գրքերից զատ կաթոլիկ հայերի համար տպագրվել է «Քարոզգիրք», որը հայ-ղփշաղներին լեզվով միակ տպագիր գիրքն է: Պահպանված անուղղակի տվյալների հիման վրա նա հանգում է այն կարծիքին, որ այդ տպարանը գործել է սոսկ երկու տարի՝ 1616—1618 թթ.:

Լեզվաբանները (Հ. Աճառյան և ուրիշներ) զբաղվել են հայոց լեզվում թուրքերենից կատարված փոխառությունների հարցով, սակայն երևույթի հակառակ կողմը՝ թուրքական լեզվում կամ բարբառներում հայերենից փոխառված բառերի հարցը անտեսվել է: Է. Շյուտցը մասնագիտորեն զբաղվել է դրանով, ինչպես նաև Միմեոն Լեհացու «Ճանապարհորդական ուղեգրություններում» և այլ աղբյուրներում պահպանված թուրքական բառերի ու արտահայ-

տուությունների, հայերենին քուլտուր ժողովուրդներից անցած բառերի, հայ միջնադարյան անձնանունների և լեզվաբանական այլևայլ հարցերով:

Պրոֆ. է. Շյուտցը նաև հայ գրականության պատմության մասնագետ է: Բավական է նշել, որ Հունգարիայում հրատարակվող «Համաշխարհային գրականության հանրագիտարանի» ցարդ հրատարակված 9 հատորներում շարադրել է V—XVIII դդ. հայ հեղինակների մասին 100 հոդված, ինչպես նաև նրա աշակերտ Պ. Սալմաշին՝ նոր և նորագույն շրջանի հայ գրականության ու գրականագիտության նշանավոր դեմքերի մասին շուրջ 200 հոդված: Հայագետ է. Բագիրի հետ կազմել են հայ գրականության անթոլոգիան, որը շուտով լույս կտեսնի:

Պատկառելի է Շյուտցի մանկավարժական վաստակը: Շուրջ երեք տասնամյակ է, ինչ նա Բուդապեշտի համալսարանի կովկասագիտության բաժնում արևելագիտություն ու հայագիտություն է դասավանդում, հայոց լեզվի դասընթացներ վարում և հայագետներ պատրաստում: Հայագիտության մարզում համակողմանի գիտելիքներ ունենալով՝ նա կարողացել է կազմել հայոց պատմության ու մշակույթի մասին ԲՈՒՀ-ական ձեռնարկ (1977 թ.): Պարբերաբար հատուկությանը նվիրված դասախոսություններ է կարդում Բլումինգտոնի (ԱՄՆ) համալսարանում:

Հոմոնոգ Շյուտցը դրսաշխարհի ամենից գործունյա և ճանաչման արժանացած՝ հայագետներից է: Նա հայոց պատմության ու մշակույթի յուրօրինակ պրոպագանդիստ է արտասահմանում: Դժվար է գտնել հին և միջնադարյան Հայաստանի պատմության, լեզվի և գրականության որևէ նշանակալից ձեռնարկում, որին նա այս կամ այն ձևով արձագանքած չլինի: Իր հետազոտությունների արդյունքները տպագրում է Սովետական Հայաստանի և արտասահմանի հայկական գիտական ամսագրերում, Եվրոպայում և ԱՄՆ-ում հրատարակվող արևելագիտական ու հայագիտական այլևայլ պարբերականներում՝ հունգարերեն, անգլերեն, գերմաներեն և հայերեն լեզուներով:

Անվանի հայագետի գիտական լայն հետաքրքրությունների, նրա ջանասիրտության ու նվիրումի մասին պատկերացում է տալիս նաև հետևյալ խոսուուն փաստը: Փսան տարվա ընթացքում՝ 1966—1986 թթ. նա մասնակցել է աշխարհի տարբեր երկրներում հրավիրված 25 միջազգային տարաբնույթ գիտաժողովների և ամենուր հանդես է եկել զեկուցումներով: Գիտական այդ կոնֆերանսները, որոնց մասնակցել է հայագետը, հրավիրվել են Իտալիայում (Ռավենո, Բերգամո, Միլան, Վենետիկ), Դանիայում (Հերսհոլմ), Հունգարիայում (Սեգեդ, Բուդապեշտ), Ֆրանսիայում (Փարիզ), ԱՄՆ-ում (Վաշինգտոն, Չիկագո, Բլումինգտոն), ԳՖՀ-ում (Բոնն), Սովետական Միությունում (Երևան), Հոլանդիայում (Լայդեն), Շվեդիայում (Ուպսալա) և այլն: Այս տարի՝ 1986 թ. զեկուցումներով հանդես է գալու միջնադարյան հայ գրականության խնդիրներին և միջնադարյան իսլամական երկրներում տեղական քրիստոնեական գաղութների հարցերին նվիրված միջազգային գիտաժողովներում, որ կայանալու են համապատասխանաբար Երևանում և Տորոնտոյում (Կանադա): Միջազգային գիտաժողովներում նա հանդես է եկել «Աշխարհացույցը և Հունգարիայի վաղ շրջանի պատմությունը», «Հունգարական ալթայագիտությունը երկու տասնամյակում», «Թաթարները Կովկասում», «Միջնադարյան հայկական գաղութները հարավարևելյան Եվրոպայում», «Հեթումի պատմությունը», «Հայ-մոնղոլական դաշինքն ընդդեմ մամլուքների», «Նախնական հաղորդում XIV դարի հայկական բառարանի մասին», «Դիտողություններ արևմտահայ գրական լեզվի ծագման մասին», «Ղրիմի հայկական գաղութի զարգացման փուլերը», «Հայերը ջալալիների շարժման դարաշրջանում» և այլ թեմաներով:

Հունգարիայի և Հայաստանի գիտությունների ակադեմիաների միջև վերջին տասնամյակներում ստեղծվել է լայն համագործակցություն: Հասարակական գիտությունների ասպարեզում փոխշահավետ այդ համագործակցությունը իր մարմնավորումը գտավ համատեղ ուժերով իրականացված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» ստվարածավալ

Ժողովածուի հրաատարակության մեջ: Ժողովածուն բացվում է է. Շյուտցի ընդարձակ հոդվածով: Սխալ կլինի, սակայն, այդ գործին նրա մասնակցությունը սահմանափակել սոսկ մեկ հոդվածով հանդես գալու շրջանակներում: Ժողովածուի ստեղծման գաղափարը պատկանում է նրան և գրքի պատրաստումն ու հրաատարակությունը իրականացել է նրա անմիջական ու մշտական ջանքերի շնորհիվ:

Տակավին երիասարդական ավյունով աշխատող վասակաշառ դիտնականից, պրոֆեսոր է. Շյուտցից դեռևս շատ սպասելիքներ ունեն հայագիտությանն ու արևելագիտությանը:

ЭДМОНД ШЮТЦ

(К 70-летию со дня рождения)

Доктор ист. наук В. Б. БАРХУДАРЯН

Резюме

Известный венгерский востоковед, арменовед Эдмонд (Одон) Шютц имеет большие заслуги в изучении истории и культуры средневековой Армении и армянских поселений. В своих исследованиях Э. Шютц обращался к армянским источникам V—IX вв., в которых сохранились ценные сведения о северных кочевых народах юга России (аланы, авары, хазары и др.), часть которых в дальнейшем переселилась на территорию Венгрии. Ученый показал, что после нашествия турков-сельджуков (XI в.), татаров, монголов (XIII в.) из Армении началось переселение армян в двух направлениях: на юго-запад и северо-запад. В результате эмиграции в Малой Азии образуется Киликийское армянское государство, на северо-западе образуются армянские поселения (Крым, Каменец-Подольск, Львов, Молдавия и другие страны Восточной Европы). Э. Шютц доказал, что в средневековой венгерской столице—Эстергоме в XIII в. было сформировано армянское поселение. Армяне в Венгрии в XVII в. активно участвовали в борьбе за освобождение страны от турецкого ига. Он особое внимание обращал на изучение армяно-кыпчакских летописных источников. Для энциклопедии всемирной литературы, издающейся в Будапеште, Э. Шютцем написано более 100 статей, посвященных известным армянским писателям и литературоведам. Более трех десятилетий в Будапештском университете он читает лекции по востоковедению и готовит кадры арменоведов-филологов.